կայացնում էին ուրոականների մի խառն բազմութիւն, որոնք, կարծես, հէնց նոր էին դուրս եկել իրանց մթին հանգստարաններից:

Ամէն ինչ լուռ էր,. ամէնուրեք տիրում էր լուսնային գիշերի մոխրագոյն խաւարը: Միայն գերեզմանատան մի հեռու անկիւնում երեւում էր ծիրանեգոյն լոյս: Մնահաւատներից ոչ ոք չէր համարձակոի մօտենալ այդ լոյսին, որը այնպիսի տպաւորութիւն էր գործում, կարծես թէ դուրս էր ցոլանում մի որեւիցէ նահատակի գերեզմանից: Բայց Ասլանը ուղիղ դիմում էր դէպի այդ լոյսը: Ես տհաճութեամբ գնում էի նրա ետեւից: Բայց իմ տհաճութիւնը իսկոյն փարատոեցաւ, երբ մօտեցամք, եւ բոցերի միջից, որպէս մի երկայն Քերովբէի դէմք, երեւաց Հիւբբիի սիրուն դէմքը: Պառաւը, նստած գետնի վրայ, թիկն տոած մի տապանաքարի, գլուխը տխրութեամբ խոնարհեցրած, խորին մտահոգութեան մէջ՝ նայում էր կրակի վրայ: Հիւբբին իր հաւաքած մացառներով բորբոքում էր կրակը: Երբ պառաւը լսեց մեր ոտնաձայնը, գլուխը վեր բարձրացրեց, նայեց իր շուրջը: Իսկ Հիւբբին կանգնեց, եւ նոյն րոպէում լսելի եղաւ նրա սուր, մետաղական ձայնը.

— Մի մօտենա՛ք...

Ասլանը հեռոից ինչ-որ պատասխանեց:

Հիւբբին առաջ վազեց, ընկաւ նրա գիրկը:

— Ես կրկին ետ բերեցի քո դիւթական գաւազանը, Հիւբբի, — ասաց Ասլանը՝ համբուրելով նրան:

— Ես էլ այդ պայմանով էի տոել քեզ, — ասաց Հիւբբին, մի առանձին ուրախութեամբ նրա ձեռքից առնելով իր աւանդը:

Պառաւը լռութեամբ կանգնեց, վեր առեց իր ճանապարհորդական պարկը, որ դրած էր տապանաքարի վրայ, կապեց մէջքին, վեր առեց իր ցուպը եւ մօտեցաւ Ասլանին:

Նրանք մի կողմ առանձնացած, երկար խօսում էին միմեանց հետ: Այդ միջոցին Հիւբբին մօտեցաւ ինձ: Ես հարցրի.

— Ճանաչո՞ւմ ես ինձ:

— Ճանաչում եմ, ինչպէս չեմ ճանաչում:

— Այս գիշեր այստե՞ղ պիտի մնաք:

— Ոչ, մենք սպասում էինք Ասլանին. հիմա պիտի գնանք:

— Ու՞ր պիտի գնաք:

— Այդ մայրիկը գիտե...